**Արցախի Տեղեկատվական շտաբ / NKR InfoCenter / НКР ИнфоЦентр**
28 сентябрь ·

Արցախի Հանրապետության Նախագահ Սամվել Շահրամանյանն ստորագրել է հրամանագիր 2023 թ. սեպտեմբերի 19-ից հետո ստեղծված իրավիճակից բխող գործողությունների մասին:

Համաձայն հրամանագրի՝ ստեղծված ծանր ու բարդ ռազմաքաղաքական իրավիճակով պայմանավորված, ելնելով Արցախի ժողովրդի ֆիզիկական անվտանգության և կենսական շահերի ապահովման առաջնահերթությունից, հաշվի առնելով ռուսական խաղաղապահ զորախմբի հրամանատարության միջնորդությամբ Ադրբեջանի Հանրապետության ներկայացուցիչների հետ ձեռք բերված պայմանավորվածությունն առ այն, որ ապահովվում է Լեռնային Ղարաբաղի քաղաքացիների, այդ թվում՝ զենքը վայր դրած զինծառայողների, նրանց տրանսպորտային միջոցների և ունեցվածքի ազատ, ինքնակամ և անխոչընդոտ ելքը Լաչինի միջանցքով և ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Սահմանադրության 93-րդ հոդվածով՝ որոշում է ընդունվել.

1) մինչև 2024 թ. հունվարի 1-ը լուծարել պետական բոլոր հիմնարկները և դրանց ենթական կազմակերպությունները և Լեռնայն Ղարաբաղի (Արցախի) Հանրապետությունը դադարում է իր գոյությունը:

2) Լեռնային Ղարաբաղի բնակչությանն, այդ թվում՝ հանրապետության սահմաններից դուրս գտնվող, սույն հրամանագրի ուժի մեջ մտնելուց հետո ծանոթանալ Ադրբեջանի Հանրապետության կողմից ներկայացված վերաինտեգրման պայմաններին՝ հետագայում Լեռնային Ղարաբաղում մնալու (վերադառնալու) հնարավորությունը ինքնուրույն և անհատապես որոշելու նպատակով:

Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում անմիջապես հրապարակվելու պահից:

***

***

Президент Республики Арцах Самвел Шахраманян подписал указ о действиях, вытекающих из ситуации, создавшейся
после 19 сентября 2023 года.

Согласно указу, в связи с создавшейся сложной военно-политической ситуацией, исходя из приоритета обеспечения физической безопасности и жизненных интересов народа Арцаха, учитывая договоренность, достигнутую при посредничестве командования российского миротворческого контингента с представителями Азербайджанской Республики о том, что обеспечивается свободный, добровольный и беспрепятственный проезд жителей Нагорного Карабаха, включая военнослужащих, сложивших оружие, со своим имуществом на их транспортных средствах по Лачинскому коридору, и руководствуясь статьей 93 Конституции Нагорного Карабаха, принято решение:

1. Распустить все государственные учреждения и организации, находящиеся в их ведомственном подчинении до 1 января 2024 года, и Республика Нагорный Карабах (Арцах) прекращает свое существование.

2. Населению Нагорного Карабаха, в том числе находящимся за пределами республики, после вступления данного Указа в силу, ознакомиться с условиями реинтеграции, представленными Азербайджанской Республикой, с целью принятия в дальнейшем самостоятельного и индивидуального решения о возможности пребывания (возвращения) в Нагорном Карабахе.

Данный Указ вступает в силу сразу после публикации.

Показать перевод

Արցախի Տեղեկատվական շտաբ / NKR InfoCenter / НКР ИнфоЦентр ограничил(-а) список людей, которые могут оставлять комментарии к этой публикации.